

Ե Ր Գ Ե Ր

ՀԱՅՆԵ-ԻՅ

Ա Ր Ծ Ի Լ Ե Ա Ն Ի

I

Անհո՛գ եղիր, ես չեմ պատմում
Երբէ՛ք մեր սէրն աշխարհին.
Թէպէտ յաճախ ես իմ երգում
Քեզ գովում եմ, իմ անգին:

Ո՛չ. ես հեռու մարդկանց աչքից՝
Վարդի ծոցում պահեցի
Գաղտնի սէրը մեր ախտալից,
Եւ իմ երգով կնքեցի:

Եթէ անգամ երբեմնապէս
Դաւաճանէ մեզ այն վարդ,
Եւ մեր սէրը, վառ կայծի պէս,
Նա դուրս ցոլայ.— քնչ մեծ դարդ:

Ես գիտեմ, որ մենք մարդկանցում
Ձենք զարթեցնիլ կասկածանք.
Մարդիկ բիրտ են. մարդկանց աչքում
Սիրոյ կայծն է— զառանցսանք:



II

Մեր իղձն ու փափաղ ծաղկում են, փթթում,
 Որպէս ծաղիկներ քաղցրաշունչ զարնան.
 Ծաղկում են, բայց և նորից թարշամում,
 Եւ այդ կրկնում է մինչ կեանքի վախճան:

Մեր վառ կրքերի այդ անվերջ խաղից
 Թունաւորւած է իմ սէրը վաղուց.
 Օ', ինչ խելօք ես, սիրտ իմ վշտալից,
 Որ կամիս դադրել դու բաբախելուց...

III

Որպէս չար ծերուկ, արնալից աչքով
 Մռայլ երկինքը նայում է երկրին,
 Եւ սև ամպերը խիտ-խիտ շերտերով
 Դիզել է նա իւր կնճռոտ ճակատին:

Լալիս են ծաղկունք, լալիս ու թոշնում
 Երկնքի այդ չար, դաժան հայեացքից.
 Լալիս, թոշնում են և՛ մարդու սրտում
 Երգ ու զգացմունք, խանդ, աւիւն ու իղձ:

Մօսկւա. 1887 թ., 13 հոկտեմբերի: